Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ 16
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2020 թվականի հունիսի 30-ին՝ ժամը 11^{00} –ին, մասամբ առցանց եղանակով՝ «Զում» (zoom) համակարգով, տեղի ունեցավ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) Գիտական խորհրդի նիստ:

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պրոֆեսոր Դավիթ Խիթարյանը:

Գիտական խորհրդի 34 անդամներից նիստին մասնակցում էին 29-ը, որից 22-ը նիստին ներկա էին՝

1. Դ. Խիթարյանը, 2. Գ. Սարգսյանը, 3. Ա. Նուշիկյանը, 4. Վ. Գևորգյանը, 5. Ա. Զատինյանը, 6. Լ. Ստեփանյանը, 7. Տ. Սիմոնյանը, 8. Ռ. Մարտյանը, 9. Օ. Պետրոսյանը, 10. Ա. Հակոբյանը, 11. Ա. Դանիելյանը, 12. Գ. Մուրադյանը, 13. Ս. Դանիելյանը, 14. Է. Մարտիրոսյանը, 15. Հ. Մելքոնյանը, 16. Գ. Նալբանդյանը, 17. Յու. Գրիգորյանը, 18. Հ. Բաբայանը, 19. Ս. Առուշանյանը, 20. Ա. Հարությունյանը, 21, Խ. Հարությունյանը, 22. Լ. Մկրտչյանը.

իսկ 7-ը՝ մասնակցում էին առցանց տարբերակով.

1. Ա. Ավետիսյանը, 2. Ն. Սելումյանը, 3. Մ. Ասատրյանը, 4 Ա. Բաղդասարյանը, 5. Ա. Ստեփանյանը, 6. Ս. Հովեյանը, 7. Ա. Բարսեղյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին՝ *1. Ա. Բաղալյանը, 2. Ս. Սիմոնյանը, 3. Վ. Վիրաբյանը, 4. Մ. Աղաբաբյանը, 5. Դ. Սարգսյանը:*

(Գիտական խորհրդի նիստի մասնակիցների գրանցացուցակը կցվում է):

Գիտական խորհրդի նիստին հրավիրված էին՝ Գիտահամակարգող խորհրդի նախագահ, մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյանը, Հասարակայնության հետ կապերի պատասխանատու Լ. Հակոբյանը և Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկ. Հ. Յու. Ավագյանը:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Դ. Խիթարյանն առաջարկեց հաստատել օրակարգը:

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին Գիտական խորհրդի նիստի ***օրակարգը.***

1. «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» գիտամեթոդական պարբերականի (N 1, 2) երաշխավորման հարց

Զեկուցող՝ Գիտահամակարգող խորհրդի նախագահ,

մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

2. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հանրային կապերի հայեցակարգ և իրականացրած աշխատանքների միջնաժամկետային զեկույց

Զեկուցող՝ Հասարակայնության հետ կապերի պատասխանատու Լ. Հակոբյան

3. Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկ. Հ. Յու. Ավագյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարց

Զեկուցող՝ Գիտական խորհրդի քարտուղար,

մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Չատինյան

3. Այլ հարցեր

1.Լսեցին՝ Գիտահամակարգող խորհրդի նախագահ, մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյանին: Նա ներկայացրեց «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» գիտամեթոդական պարբերականի (N 1, 2) երաշխավորման հարցը: Պարոն Ֆ. Ղազարյանը մասնավորապես նշեց, որ պարբերականներում ընդգրկվել են այն հոդվածները, որոնք արդիական են, այժմեական, փորձարարական բնույթ են կրում (շուրջ 44 հոդված) և ունեն գրախոսականներ: Սակայն, հարկ է նշել, որ հոդվածների գրեթե 68 տոկոսը խմբագրվել և սրբագրվել է, իսկ 3 հոդված մերժվել է տպագրության, 3 ամբիոն հոդված չի ներկայացրել.

(Գիտահամակարգող խորհրդի նախագահի զեկույցը կցվում է):

Ելույթ ունեցավ՝ պրոֆեսոր Դավիթ Խիթարյանը: Նա հանձնարարեց պարոն Ֆ. Ղազարյանին մեկ ամսվա ընթացքում ներակայացնել Գիտահամակարգող խորհրդի հաշվետվությունը, ինչպես նաև, ինստիտուտում գիտությունը խրախուսելու համար, վարկանիշային կարգով քննարկել և ներկայացնել 5 լավագույն միջազգային այն հանդեսները, որոնցում հոդվածներ են տպագրել մեր բուհի պրոֆեսորադասախոսական կազմի անդամները (ի դեպ, բուհն է վճարել տպագրվող հոդվածների համար): Պարոն Դ. Խիթարյանը հավելեց, որ դասախոսների աշխատանքներում ևս պետք է լինի մրցակցություն: Հետևաբար, տարեվերջին, որպես խրախուսանք՝ լավագույն գիտական աշխատանքների հեղինակները հավելավճար կստանան:

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշեցին՝ «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» գիտամեթոդական պարբերականը (N 1, 2) երաշխավորել տպագրության:

2.Լսեցին՝ Հասարակայնության հետ կապերի պատասխանատու Լ. Հակոբյանին, որը ներկայացրեց «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հանրային կապերի հայեցակարգում արտացոլված մոտեցումներն ու գերակայությունները:

Ելույթ ունեցան՝ ռեկտորի պաշտոնակատար, պրոֆեսոր Դ. Խիթարյանը, Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր Ա. Նուշիկյանը, ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան, կենս. գիտ. թեկն., դոցենտ Լ. Ստեփանյանը, Հոգեբանության և մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Բաբայանը, Իրավական ապահովման բաժնի պետ Օ. Պետրոսյանը, ռեկտորի օգնական Լ. Բաղդասարյանը, մագիստրանտ Արման Ավետիսյանը:

Դ. Խիթարյանը, Ա. Նուշիկյանը, Լ. Ստեփանյանը նշեցին, որ բուհի արտաքին վարկանիշին վերաբերող հետազոտությանը, որին մասնակցել էին մայրաքաղաքի և ՀՀ մարզերի 15-17 տարեկան շուրջ 1000 շահառու, ավելի արդյունավետ կլիներ մասնակցեին տարբեր տարիքային խմբերի մարդիկ:

Բուհի իմիջի բարձրացման համար Լ. Ստեփանյանն առաջարկեց ֆեյսբուքում երկար տեքստեր չտեղադրել, այլ կիրառել «Խարսխի» տեխնիկան, իսկ մագիստրանտ Ա. Ավետիսյանն էլ ավելացրեց՝ կարելի է սոցիալական ցանցում ինստիտուտի վերաբերյալ ավելի շատ տեսահոլովակներ տեղադրել, ինչը նույնպես կնպաստի բուհի վարկանիշի բարելավմանը:

Լ. Բաղդասարյանը, Օ. Պետրոսյանն առաջարկեցին ինստիտուտի իմիջի բարձրացումն առաջին հերթին սկսել անվանումից. այսինքն՝ հարկավոր է այն ճիշտ ներկայացնել համապատասխան կառույցներին. բուհի հին անվանումը պաշտոնական տեղեկագրերում դեռևս պահպանվում է:

Ռեկտորի պաշտոնակատարի կարծիքով բոլորիս նպատակը մեկն է՝ վերականգնել ինստիտուտի վարկանիշը՝ դասավանդեն որակյալ մասնագետներ, ունենանք կիրթ և գրագետ ուսանողներ ու շրջանավարտներ:

Դ. Խիթարյանը հատկապես շեշտեց, որ երբևէ ինստիտուտը հավելյալ միջոցներ չի տրամադրել բուհի վերաբերյալ որևէ տեղեկատվական նյութ տարածելու համար:

Ռեկտորի պաշտոնակատար Դ. Խիթարյանը շնորհակալություն հայտնեց տիկին Լ. Հակոբյանին կատարած աշխատանքի համար, նշելով, որ ինստիտուտի փոփոխություններին զուգընթաց ստեղծվել է Հասարակայնության հետ կապերի բաժինը, որն ամբողջությամբ կայացած չի. դեռևս չկան համապատասխան սարքավորումներ, անհրաժեշտ պարագաներ, հետևաբար կարող են լինել նաև բացթողումներ, որոնք վստահաբար առաջիկայում աստիճանաբար կշտկվեն:

(Հանրային կապերի հայեցակարգը և իրականացրած աշխատանքների միջնաժամկետային զեկույցը կցվում են):

Հարցը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշեցին՝ Հասարակայնության հետ կապերի պատասխանատու Լ. Հակոբյանի «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հանրային կապերի հայեցակարգը և կատարված աշխատանքների միջնաժամկետային զեկույցն ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ Գիտական խորհրդի քարտուղար, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Չատինյանին: Նա ներկայացրեց Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Հ. Յու. Ավագյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

Մասնագիտությունը՝ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ».

(Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են):

Ելույթ ունեցան՝ ռեկտորի պաշտոնակատար Դ. Խիթարյանը, Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Հարությունյանը:

Պարոն Դ. Խիթարյանը նշեց, որ Գիտահամակարգող խորհուրդը հաստատել է Հ. Ավագյանի թեկնածությունը, և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն առկա են, բավարարում են ԲՈԿ-ի պահանջները՝ Հ. Յու. Ավագյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Տիկին Ա. Հարությունյանն իր ելույթում շեշտեց, որ Հասմիկ Ավագյանն օժտված է մանկավարժին բնորոշ բարձր որակական հատկանիշներով: Գիտամանկավարժական գործընթացում կիրառում է արդի դասավանդման մեթոդներ, ուսանողներին սովորեցնում է ընտրած մասնագիտության հանդեպ ունենալ բարձր պատասխանատվություն: Սպորտային գիտության հետազոտություններում չի սահմանափակվում ձեռքբերվածով, նա դեռևս ասելիք ունի:

Կարծում եմ, Հ. Ավագյանն արժանի է՝ ստանալու դոցենտի գիտական կոչում:

Ռեկտորի ԺՊ Դ. Խիթարյանն առաջարկեց ձևավորել հաշվիչ հանձնաժողով:

Քվեարկություն. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշեցին՝ ձևավորել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Հ. Մելքոնյան, Ա. Նուշիկյան, Ռ. Մարտյան:

Քվեարկության արդյունքներ. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ըստ փակ քվեարկության արդյունքների (Գիտական խորհրդի 34 անդամներից ներկա էին 22-ը, կողմ՝ 21, դեմ՝ 0, անվավեր՝ 1)՝

ՀՀ գիտամանկավարժական կադրերին գիտական կոչումներ շնորհելու կարգի 2-րդ մասի, 5. բ. կետի համաձայն՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու *Համմիկ Յուրիկի Ավագյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և երաշխավորել ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատել ինստիտուտի Գիտական խորհրդի որոշումը (Քվեարկության արդյունքները կցվում են):*

Արձանագրությունը կազմեց Ե. Սիմոնյանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ. ԽԻԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ա. ՉԱՏԻՆՅԱՆ